

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձն Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

30.12.2015



Արմավիրի մարզի հարգարժան բնակիչներ, սիրելի հայրենակիցներ, Ավարտվում է 2015 թվականը, որ մեր պետության, մեր ժողովրդի համար նշանավորվեց կարևոր և պատմական իրադարձություններով՝ մեզ դարձնելով համախմբված համընդհանուր գաղափարների շուրջ, և նպատակասլաց՝ մեր կյանքն առավել լավը դարձնելու գործում:

Եկեք սիրով ու ջերմությամբ լցվենք մեկմեկու հանդեպ, հավատանք մեր ուժերին, մեր լուսավոր գալիքին ու անենք հնարավորը՝ մեր երազանքների հայրենիքն ունենալու և մեր երազած իրականության պայմաններում ապրելու համար:

Մենք ուժեղ ենք, մենք հաղթող ենք, մենք հաջողության հասնող ենք, երբ միասնական ենք: Իսկ մենք գիտենք մեկմեկու թիկունք լինել, տխրություն և ուրախություն կիսել և, ի վերջո, մեր նպատակը գործ դարձնել: Ուստի եկեք 2016 թվականը դիմավորենք նորոգ հավատով, նոր հույսերով և առաջընթացի մեծ ակնկալիքով:

Սիրելիքարեկամներ,

Միայն վերջին տարիներին Արմավիրի մարզում պետության և մասնավոր հատվածի կողմից իրականացված բազմալորտ ծրագրերն ինձ թույլ են տալիս ասելու, որ մեր երկիրը զարգացման ճիշտ ուղու վրա է, և այն բխում է մեր ժողովրդի շահերից:

Իհարկե, անելիքներ դեռ շատ կան, որոնք, ուղղակի վստահ եմ, աստիճանական, ըստ առաջնահերթության լուծում են ստանալու մեր բոլորի օգնությամբ և աջակցությամբ:

Ուստի նոր տարում մենք շարունակելու ենք համառորեն աշխատել՝ մեր ունեցած հաջողություններն ու ձեռքբերումները կրկնապատկելու, բացթողումները լրացնելու, կիսատ գործերն ավարտին հասցնելու և յուրաքանչյուր պահ մեր ազգաբնակչության կողքին լինելու, նրա հոգսը կիսելու մեծ վճռականությամբ ու կամքով:

2016 թվականը թող որ բոլորիս համար լինի խաղաղ արարման և բարեկեցության տարի՝ արդարացնելով մեր սպասումներն ու հույսերը: Թող որ այս նոր տարին բազմաթիվ երջանիկ պահերի, ժպիտների ու հաջողությունների տարի լինի: Խաղաղություն թող լինի մեր երկրի սահմանին, մեր օջախներում, մեր սրտերում և ամենուր:

Արմավիրի մարզի հարգարժան բնակիչներ, սիրելի հայրենակիցներ, Ես միանում եմ բոլոր այն շնորհավորանքներին, որոնք հնչելու են առաջիկա օրերին Ձեր օջախներում, բոլոր բարեմաղթանքներին, որոնք ասվելու են սիրով ու

լավատեսությամբ: Թող Ամանորի թարմ շունչը յուրաքանչյուրիդ ընտանիքին
պարզևի անսահման երջանկություն, բարօրություն, խինդ ու ծիծաղ: Բարին ընդ ձեզ:
Շնորհավոր Ամանոր և Մուրբ ծնունդ: